



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի պարտականությունները կատարող

Արամ Մեյմարյան

«26» 05 2026 թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 068 - 26

Նախաձեռնող՝

«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ

Սյունիքի մարզ, ք. Կապան Գործարանային փող., 2. 4

Գործունեությունը՝

Մերադական օգրակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխություն

Սյունիքի մարզ, Կապան համայնք, Կապան բնակավայր

Առդիր՝ 7 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 068 - 26

«26» 05 2026 թ.

**Սյունիքի մարզի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ
Գործունեության տեսակ՝	Ա կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Կապան համայնք, Կապան բնակավայր

**Ներածական մաս.** «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Սյունիքի մարզի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներով: Նախատեսվող գործունեությունը ենթակա է փորձաքննության Օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն:

**Նկարագրական մաս.** «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը շահագործում է իրեն պատկանող Կապանի լեռնահարստացման կոմբինատը, որը գործում է 1962 թվականից: Կոմբինատը գտնվում է ՀՀ հարավ-արևելյան մասում, Կապան մարզկենտրոնի սահմանում, Ողջի գետի միջին հոսանքում (ձախ ափում), ծովի մակերևույթից 800-1300 մ բարձրության վրա: Հարստացուցիչ ֆաբրիկայի պոչանքները պահեստավորվում են Գեղանուշի պոչամբարում, որը գտնվում է Գեղանուշ գյուղից 800-1000 մ հեռավորության վրա: Գեղանուշի պոչամբարը տեղակայված է Գեղանուշ գետի կիրճում: Շրջանը ցածրալեռնային է, նիշերի բացարձակ բարձրությունը ծովի մակերևույթից 700 մ-ից մինչև 1250 մ:



«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ հարստացուցիչ ֆաբրիկայի դրվածքային հզորությունն ըստ տարեկան վերամշակվող հանքաքարի՝ մեկ միլիոն տոննա է: Սակայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ ներկայում ֆաբրիկան սահմանափակված է տարեկան 600 հազար տոննա արտադրողականությամբ: Ֆաբրիկայի աշխատանքն ամբողջ նախագծային հզորությամբ հնարավորություն կտա վերամշակել ինչպես Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրից արդյունահանվող հանքաքարի ամբողջ ծավալը (700 հազար տոննա), այնպես էլ նախագծային ծավալներով հանքաքար արդյունահանել Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրից (300 հազար տոննա) և արդյունահանված հանքաքարն ամբողջությամբ վերամշակել «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ի ֆաբրիկայում:

Պոչատարի խողովակները տեղադրված են բետոնե հենարանների վրա: Զերմաստիճանային տատանումների կոմպենսացման համար խողովակաշարի վրա նախատեսված են խցուկային կոմպրեսատորներ: Խողովակներից մեկը գործող է, մյուսը՝ պահուստային: Հարստացման պրոցեսում առաջացած պոչերը նախ խողովակաշարով ինքնահոս ուղղվում են պոմպակայան, որի երկարությունը 480 մ է: Պոմպակայանից դեպի պոչամբար գործում է ճնշումային պոչատարը՝ 2,12 կմ երկարությամբ: Պոմպակայանում մի պոչատարի համար տեղադրված են իրար հաջորդաբար միացված 4 հատ Warman 8/6, իսկ մյուս պոչատարի համար՝ իրար հաջորդական միացված 4 հատ Warman 6/4 պոմպեր: Պոմպակայանում տեղադրված են հակավթարային հակադարձ փականներ, որոնք արգելակում են պոմպի աշխատանքը պոչատարի վթարի դեպքում: Պոչատարի վթարային իրավիճակների համար նախատեսված են վթարային դատարկման ավազաններ՝ 600 մ<sup>3</sup> ծավալով: Ուղեգծի ամբողջ երկայնքով տեղակայված են կիսախողովակներ՝ կոմպենսացիոն խցիկներով, որտեղ տեղադրված են վթարային ահազանգման միջոցներ:

Գեղանուշի պոչամբարը նախագծվել և շահագործվել է որպես վերընթաց տեսակի պոչամբար: Պոչամբարի այդ տեսակի անվտանգային պարամետրերը զիջում են հնարավոր մյուս երկու տեսակների՝ վարընթաց և կենտրոնահեն պոչամբարների անվտանգային պարամետրերին: Միջազգային առաջադեմ փորձն առաջարկում է հնարավորության դեպքում հրաժարվել վերընթաց տիպի պատվարով պոչամբարներից: Նախկինում կատարված հետազոտությունների, գնահատումների և վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ պոչամբարի երկու պատվարներն էլ չեն բավարարում կայունության պաշարի գործակցի նվազագույն պայմանին, ուստի ներկայում կառուցվում է երկու պատվարների ամրաբեռը: Այն ուղղված է պատվարների կայունության պաշարի գործակցի մեծացմանը և հնարավոր ռիսկերի նվազեցմանը: Նախագծի շրջանակներում դիտարկվել են պոչամբարի վերակառուցման հնարավոր տարբերակները՝ հաշվի առնելով արդեն իսկ գոյություն ունեցող պոչամբարը, կառուցված ամրաբեռը, տեղանքի ռելիեֆային, երկրաբանական և հիդրոերկրաբանական առանձնահատկությունները, ձևավորվող ծավալի արդյունավետությունը և գոյություն ունեցող ենթակառուցվածքների պարտադիր պահպանման պայմանը: Հաշվի առնելով այն փաստը, որ գոյություն ունեցող պատվարները վերընթաց տիպի են, իսկ նոր առաջարկվողը՝ կենտրոնահեն, ընտրվել է պոչամբարի պատվարի համակցված տարբերակի կիրառումը: Այս դեպքում



նախատեսվում է համակցել կենտրոնահեն և վերընթաց տիպի պատվարները: Արդյունքում առաջարկվում է պոչամբարի պատվարները մինչև 841 մ նիշը շարունակել, կառուցել վերընթաց տիպի, իսկ 841 մ նիշից հետո մինչև նախատեսվող առավելագույն 871 մ նիշը՝ կենտրոնահեն տիպի: Կենտրոնահեն հատվածի առավելագույն բարձրությունը կազմելու է մոտ 30 մ: Պոչամբարի ընդհանուր արդյունավետ ծավալը գնահատվել է մոտ 17,4 մլն մ<sup>3</sup>, ինչը համարժեք է շուրջ 24,3 մլն տոննա պոչանքի, ելնելով պոչանքների միջին ծավալային կշռից՝ 1,4 տ/մ<sup>3</sup>: Ծավալային գնահատականները և տարածաչափական վերլուծությունները կատարվել են MUK3D ծրագրային համալիրի կիրառմամբ՝ հաշվի առնելով նախագծային տեղամասի ռելիեֆը, ԼՅՄՍՆ դինամիկան և հիդրոտեխնիկական սահմանափակումները: Ներկայումս, երբ պոչամբարի բարձրությունը կազմում է 833,5 մ, կանխատեսվում է մոտ 2 մլն.մ<sup>3</sup> պոչերի տեղադրում: 1,0 մլն.տ արտադրողանակության դեպքում պոչամբարի ծավալը կբավարարի մինչև 2028 թվականի հունիսը: 841 մ նիշից վեր նախատեսվող կենտրոնահեն հատվածը թույլ կտա կուտակել հավելյալ 7,3 մլն մ<sup>3</sup> պոչանք, ինչը կապահովի պոչամբարի շահագործումը մինչև 2038 թվականը:

Պոչամբարի հյուսիսային և հարավային պատվարների բարձրացումը նախատեսվում է իրականացնել Շահումյանի հանքավայրի շահագործման արդյունքում առաջացող դատարկ ապարների կիրառմամբ:

Նախագծով սահմանվում է, որ ներկայում գործող ջրահեռացման համակարգը կշարունակի սպասարկել մինչև պոչամբարի 851 մ բարձրությունը՝ առանց վերափոխումների: Այս փուլից հետո, պատվարի շարունակական բարձրացմանը զուգահեռ, նախատեսվում է փուլային կարգով ավելացնել ևս չորս նոր ջրընդունիչ աշտարակ՝ յուրաքանչյուրը մոտավորապես հինգ մետր բարձրությամբ: Նոր նախագիծը չի նախատեսում փոփոխություններ պոչամբարի ընդհանուր ջրամատակարարման կամ ջրային հաշվեկշռի համակարգում: Ֆիլտրացիոն հոսքերի հավաքման և տեղափոխման համար նախատեսվում է կառուցել դրենաժային համակարգ՝ նպատակ ունենալով նվազեցնել հիդրոստատիկ ճնշումները պատվարի մարմնի ներսում և բարելավել ընդհանուր հիդրոտեխնիկական կայունությունը: Նախատեսվող դրենաժային համակարգը միանալու է արդեն գործող դրենաժային համակարգին: Նոր համակարգի ներդրումը, ոչ միայն կլրացնի գործող դրենաժային համակարգը, այլև կմեծացնի նրա հզորությունն ու արդյունավետությունը: Պարզեցված ջրի ջրատարների և մայրուղային խյուսատարների ուղիների երկու կողմում նախատեսվում են մեխանիկական պաշտպանիչ գոտիներ, յուրաքանչյուրը՝ 20 մետր լայնությամբ, որտեղ կառուցապատումը և այլ նպատակների համար օգտագործումն արգելվում է: Պոչամբարի շրջակայքում նախատեսվում է մեխանիկական պաշտպանիչ գոտի, որը կապահովի մարդկանց, կենդանիների, շենքերի և կառուցվածքների անվտանգությունը: Մեխանիկական պաշտպանիչ գոտին կահավորվելու է կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններով, որոնց հեռավորությունը միմյանցից կլինի ոչ ավելի, քան 100 մետր:

Դիտարկվող տարածքը հիդրոերկրաբանական տեսակետից իրենից ներկայացնում է տիպիկ լեռնային տարածք, կտրուկ և խիստ մասնատված ռելիեֆով, զանազան լանջերով, նեղ գետահովիտներով: Տարածքի հիմնական ջրային զարկերակն է համարվում Ողջի



գետն իր մշտական և ժամանակավոր վտակներով: Ողջի գետը սկիզբ է առնում Կապուտջուղ սարի լանջերից: Այն ունի մի շարք վտակներ, որոնցից առավել ջրառատ են Կապուտանը, Ծակքարը, Բագացջուրը, Գեղին, Գիրաթաղը, Վաչագանը, Գեղանուշը, Խալաջը և այլն:

Ըստ հաշվետվության՝ շրջանի ստորերկրյա ջրերը տեղաբաշխված են անհավասար: Ապարների ջրանցիկության և լիթոլոգիական առանձնահատկությունների և ֆիզիկաաշխարհագրական պայմանների հետևանքով տեղանքում գերակշռում է մակերևութային հոսքը: Ստորերկրյա ջրերի կուտակման պայմաններն անբարենպաստ են, կայուն ջրապարունակ հորիզոնները որպես կանոն բացակայում են: Երբեմն հանդիպող ջրավորված տեղամասերը տեղադրված են ապարների հողմահարման կեղևի ճեղքավոր գոտում: Պոչամբարի ամբարտակի առանցքի տեղամասում գրունտային ջրերը բացված են № 1 և № 2 հորատանցքերում 780-788 մ բացարձակ նիշերի վրա:

Պոչամբարի հարակից տարածքն իրենից ներկայացնում է հիմնականում բաց տարածություն, որտեղ հարթ հատվածներում ձևավորվել է անկանոն խոտածածկ: Պոչամբարին հարող լանջերը հիմնականում թփուտածածկ են, անմիջապես նախատեսվող գործունեության վայրում հանդիպող մի քանի ծառատեսակների բնի հաստությունը չի գերազանցում 20 սմ: Համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարծիքի՝ ներկայացված գործող և հայցվող լեռնահատկացման տարածքից շուրջ 30 հա մակերեսով հատվածը հանդիսանում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կառավարման լիազորությունների ներքո գտնվող պետական սեփականության անտառային հող և առկա է շուրջ 6 հա թփածածկ տարածք, որն անտառային հող չէ:

Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկության՝ անմիջապես հարստացուցիչ ֆարրիկայի և պոչամբարի տարածքում և նրանց մոտակայքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել՝ ըստ հատուկ կատարված հետազոտությունների արդյունքների:

Աշխատանքներն իրականացնելիս բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր: Ֆարրիկան աշխատում է լրիվ շրջանառու համակարգով, արտադրական կեղտաջրերի արտահոսք դեպի բաց ջրահոսքերը տեղի չի ունենում: Ոռոգման և ջրցանման կարիքների համար օգտագործվող ջուրը ծախսվում է անվերադարձ, արտահոսքեր չեն առաջանում: Տնտեսա-կենցաղային ջրօգտագործումից և անալիտիկ լաբորատորիայում առաջացող կեղտաջրերն ուղղվում են Կապան քաղաքի կոյուղու կոլեկտոր:

Նախատեսվող գործունեության ընթացքում գոյացող արտադրության և սպառման թափոնների հիմնական մասը ժամանակավոր կուտակվելու է Ընկերության տարածքում առկա թափոնների պահման ժամանակավոր հրապարակում, այնուհետև տրամադրվելու է հատուկ մասնագիտացված ընկերություններին՝ հետագա վերամշակման կամ ոչնչացման նպատակով, իսկ կենցաղային թափոնները և շինարարական աղբը պարբերաբար տեղափոխվելու են քաղաքային աղբավայր «Կապանի կոմունալ ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրին համապատասխան: Ընդերքօգտագործման թափոն հանդիսացող հարստացուցիչ ֆարրիկայի շխմաներն ու պոչանքները կուտակվելու են Գեղանուշի պոչամբարում:



Հարստացուցիչ ֆարրիկայում աղմուկի հիմնական աղբյուրներ են հանդիսանում ջարդման տեղամասը և աղացները, որոնք գտնվում են իրարից 200-250 մ հեռավորության վրա: Երկու արտադրամասներն էլ գտնվում են քարե շինություններում և աղմուկի մակարդակը թե գիշերային, թե ցերեկային ժամերին գտնվում է սահմանված նորմերի սահմաններում:

Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման համաձայն՝ նախատեսվում է իրականացնել մակերևութային և ստորգետնյա ջրերի, մթնոլորտային օդի, հողի որակի և կենսաբազմազանության մշտադիտարկումներ: Մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվում է հատկացնել 2 մլն 232 հազար ՀՀ դրամ գումար:

Ֆարրիկայում աշխատանքների դադարեցումից հետո նախատեսվում է իրականացնել կոնսերվացում և ռեկուլտիվացում: Բոլոր այն սարքավորումները և խողովակները, որոնք անմիջապես շփվել են թունավոր նյութերի հետ, պետք է վնասազերծվեն, ռեազենտների և քիմիկատների մնացորդները կոնսերվացումից հետո պետք է վաճառվեն կամ վերադարձվեն մատակարարին: Տարածքում կուտակված վտանգավոր թափոնները պետք է հանձնվեն պայմանագրային հիմունքով լիցենզավորված կազմակերպություններին, տարածքի աղտոտված հողի շերտը պետք է հանվի և տեղափոխվի պոչամբար:

Պոչամբարի պատնեշի ռեկուլտիվացումն իրականացվելու է պատնեշի բարձրացմանը զուգահեռ: Պոչամբարի վերջնական ռեկուլտիվացիան (21 հա) կիրականացվի պոչամբարի ծավալի սպառվելուց հետո: Պոչամբարի ռեկուլտիվացիան ներառում է պոչամբարից մնացորդային ջրի հեռացումը դրենաժային համակարգի միջոցով կամ գոլորշունակության գործակիցը հաշվի առնելով՝ մակերեսի բնական չորացումը: Իրականացվելու է պոչամբարի տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Տեխնիկական ռեկուլտիվացիայի նպատակով անհրաժեշտ է հարթեցնել պոչամբարի մակերեսը բուլդոզերով, տոփանել գլխոնով՝ տալով նրան որոշակի թեքություն, ամրացված մակերեսը ոռոգել մակերևութային ակտիվ լուծույթով, որը կստեղծի անջրաթափանց մակերես, ինչը թույլ կտա խուսափել տեղումների ժամանակ պոչանքների հեղուկացումից, մշակված մակերեսի վրա ստեղծել 40-50 սմ դրենաժային շերտ խոշոր խճից և դատարկ ապարներից, ինչը կապահովի անձրևաջրերի հեռացումը պոչամբարի մակերեսից: Տեխնիկական ռեկուլտիվացիայից հետո դրենաժային շերտի վրա 50 սմ հաստությամբ փովելու է 25 սմ նախկինում հանված հողի բերրի շերտը, իսկ 25 սմ տրամադրվելու է համայնքի կողմից և իրականացվելու է տեղանքին բնորոշ խոտաբույսերի ցանք: Պոչամբարի ռեկուլտիվացման հաշվարկն արված է պոչամբարի վերջնական մակերեսի համար, որը կազմում է 21 հա:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների, արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում նախատեսվել են լրացուցիչ միջոցառումներ (ըստ իրավիճակի):



**Պատճառաբանական մաս.** Փորձաքննական գործընթացում Օրենքով սահմանված կարգով ազդակիր՝ Կապան բնակավայրում իրականացվել է հանրային լսում, որի ընթացքում մասնակիցները հավանության են արժանացրել նախատեսվող գործունեության իրականացումը: Կապանի Լեռնահարստացման Կոմբինատը, սոցիալական պատասխանատվության շրջանակներում համագործակցելով Կապանի համայնքապետարանի հետ՝ ստանձնում է տարեկան 300 000 000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումարի պարտավորություն՝ կրթության, մշակույթի, սպորտի, քաղաքաշինության, գյուղատնտեսության, հանրային տրանսպորտի, բնապահպանության, առողջապահության, համայնքի բնակիչներին սոցիալական աջակցության և այլ ոլորտներում:

Մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվել են մի շարք միջոցառումներ՝ առաջնորդվելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով:

Թափոնների գործածությունն իրականացվելու է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Ջրային ռեսուրսների պահպանության նպատակով կիրառվում է ջրի փակ շրջանառու համակարգ և հոսքաջրերի արտահոսքը դեպի ջրային ռեսուրսներ բացառվելու է:

Անտառային հողերի օգտագործումը փոխհատուցելու նպատակով կնքվելու է փոխհատուցման պայմանագիր՝ համաձայնեցնելով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ: («Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից առարկություն չի ներկայացվել՝ նշված փոխհատուցման պայմանագիրը կնքելու պայմանով):

Նախաձեռնողը պարտավորվել է իրականացնել անտառային հողերի եռապատիկի չափով անտառտնկում:

Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել պետական կառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

### **Փորձաքննական պահանջներ**

Նախատեսվող գործունեություն իրականացնելիս անհրաժեշտ է՝

1. համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1045-Ն որոշման՝ կնքել վնասի փոխհատուցման պայմանագիր,

2. ողջամիտ ժամկետում փոխհատուցել անտառային տնտեսությանը հասցված վնասը՝ տրամադրվող անտառային տարածքի (շուրջ 32 հա) առնվազն եռապատիկի, ինչպես նաև 6 հա թփածածկ տարածքի կրկնապատիկի չափով անտառապատման աշխատանքներ իրականացնելու միջոցով և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ կնքել անտառապատման աշխատանքների ժամանակացույցի վերաբերյալ համաձայնագիր,



3. գործունեության ընթացքում համապատասխան մասնագետի կողմից իրականացնել կարմիրգրքյան բույսերի մշտադիտարկումներ և կարմիրգրքյան բուսատեսակներ հանդիպելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշման պահանջներով,

4. աշխատանքներն իրականացնել համաձայն 2023 թվականին հաստատված N 27 ջրօգտագործման և ջրահեռացման նորմաների,

5. առաջնորդվել Կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում դիտանցման իրականացման կարգը սահմանելու մասին» N 661-Ն, Կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջները և չափանիշները սահմանելու մասին» N 984-Ն և Կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարմանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարմանն ու վերամշակմանը ներկայացվող տեխնիկական պահանջները և չափանիշները սահմանելու մասին» N 985-Ն և որոշումների պահանջներով:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Քրիստինա Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Քրիստինե Հարությունյան